ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԱՊՊԱ պայմանների համաձայն՝ անկախ այն հանգամանքից, թե որքան են կազմում ավտովթարի հետևանքով տուժողին պատճառված անձնական և գույքային վնասները՝ տուժողին հատուցում կարող է տրվել ոչ ավել, քան ԱՊՊԱ պայմանագրում նշված ապահովագրական գումարը:

ԱՊՊԱ–ի գծով **ապահովագրական գումարի** մեծություններն են՝

1. **Անձնական վնասների** դեպքում՝
   - մեկ ապահովագրական պատահարի համար՝ **10 000 000** ՀՀ դրամ
   - յուրաքանչյուր տուժողի համար՝ **3 300 000** ՀՀ դրամ
2. **Գույքային վնասների** դեպքում՝
   - մեկ ապահովագրական պատահարի համար՝ **1 800 000** ՀՀ դրամ:

Եթե վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, ապա տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են նրանց պատճառված անձնական կամ գույքային վնասների չափերին համամասնորեն, սակայն ոչ ավել, քան ապահովագրական գումարի չափը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Օրինակ 1

Տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով վնասվել է 3 մեքենա՝ ներառյալ մեղավոր վարորդի մեքենան: Տուժող վարորդների մեքենաներից յուրաքանչյուրի վնասը կազմել է 2 մլն ՀՀ դրամ, այսինքն՝ ընդհանուր վնասը կազմել է 4 մլն ՀՀ դրամ:

Հատուցման գումարը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Քանի որ մեկ ավտովթարի հետևանքով գույքային վնասների համար ապահովագրական հատուցման առավելագույն գումարը սահմանված է 1.8 մլն ՀՀ դրամ, ապա միայն այդքան գումարի սահմաններում կարող է կատարվել հատուցում:

Քանի որ յուրաքանչյուր մեքենայի վնասը հավասարաչափ է, նշանակում է համամասնությունը 50% է՝ մեկ տուժողի հաշվով, հետևաբար յուրաքանչյուր տուժող վարորդ կստանա 1.8 մլն ՀՀ դրամի հատուցման 50%-ը, այսինքն՝ 900 հազ. ՀՀ դրամ:

Օրինակ 2

Տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով հատուցման ենթակա անձնական վնասներ է կրել 3 անձ: Ըստ յուրաքանչյուր տուժողի վնասի մեծությունը կազմել է.

1-ին տուժող՝ 3 300 000 ՀՀ դրամի վնաս
2-րդ տուժող՝ 6 600 000 ՀՀ դրամի վնաս
3-րդ տուժող՝ 3 300 000 ՀՀ դրամի վնաս:

Հատուցման գումարը կհաշվարկվի հետևյալ կերպ.

Ավտովթարի հետևանքով պատճառված ընդհանուր վնասը կկազմի 13 200 000 ՀՀ դրամ: Քանի որ անձնական վնասների առավելագույն գումարը յուրաքանչյուր պատահարի համար սահմանված է 10 000 000 ՀՀ դրամ, ապա անհրաժեշտ է հաշվարկել այս դեպքում յուրաքանչյուր տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը:

Յուրաքանչյուր տուժողի պատճառված վնասի չափի տեսակարար կշիռը վնասի ընդհանուր գումարի մեջ՝

1-ին տուժող – տեսակարար կշիռը 25% է (3 300 000 / 13 200 000 * 100%)
2-րդ տուժող – տեսակարար կշիռը 50% է (6 600 000 / 13 200 000 * 100%)
3-րդ տուժող – տեսակարար կշիռը 25% է (3 300 000 / 13 200 000 * 100%)

Յուրաքանչյուր տուժողին վճարվող ապահովագրական հատուցման չափը կկազմի՝

1-ին տուժող – 2 500 000 ՀՀ դրամ (10 000 000 * 25%)
2-րդ տուժող – 5 000 000 ՀՀ դրամ (10 000 000 * 50%)
3-րդ տուժող – 2 500 000 ՀՀ դրամ (10 000 000 * 25%)

Համաձայն հաշվարկի՝ 2-րդ տուժողին վճարվող ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է անձնական վնասների համար յուրաքանչյուր տուժողին հատկացվող ապահովագրական գումարի առավելագույն չափը՝ 3 300 000 ՀՀ դրամը՝ 1 700 000 ՀՀ դրամի չափով: Հետևաբար, 1 700 000 ՀՀ դրամը կհատուցվի 1-ին և 3-րդ տուժող անձանց՝ իրենց ընդհանուր վնասների մեջ յուրաքանչյուրի վնասին համամասնական չափով (1-ին և 3-րդ տուժող անձանց ընդհանուր վնասը 6 600 000 ՀՀ դրամ է, յուրաքանչյուրինը ընդհանուրի մեջ 3 300 000 ՀՀ դրամ կամ 50%): Արդյունքում 1 700 000 ՀՀ դրամը պետք է բաշխվի հավասարաչափ 1-ին և 3-րդ տուժող անձանց միջև, յուրաքնաչյուրին՝ 850 000 ՀՀ դրամ (1 700 000 / 2): Սակայն, քանի որ այս դեպքում 1-ին և 3-րդ տուժող անձանց վճարվող հատուցման չափը կազմում է 3 350 000 ՀՀ դրամ (2 500 000 + 850 000) և գերազանցում է անձնական վնասների համար յուրաքանչյուր տուժողին հատկացվող ապահովագրական գումարի առավելագույն չափը՝ 3 300 000 ՀՀ դրամը, 1-ին և 3-րդ տուժող անձանց վճարվող հատուցման չափը կկազմի 3 300 000 ՀՀ դրամ:

Վերջնահաշվում յուրաքանչյուր տուժող կստանա 3 300 000 ՀՀ դրամի հատուցում: